


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. մայիսին


/վերլուծություն/

2013թ. մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 14235 գործարքներ, որոնց քանակը 2013թ. ապրիլի համեմատ նվազել է 10.0%-ով, իսկ 2012թ. մայիսի համեմատ աճել՝ 2.1%-ով:

2013թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3191 օտարման գործարքների 75.2%-ը կազմել են առուվաճառքները, 24.4%-ը՝ նվիրատվությունները և 0.4%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 36.5%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.6%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2013թ. մայիսին, 2013թ. ապրիլի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 20.4%-ով, իսկ 2012թ. մայիսի համեմատ՝ 10.2%-ով:

2013թ. մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 58.9%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. մայիսին, 2013թ. ապրիլի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 31.5%-ով, իսկ 2012թ. մայիսի համեմատ՝ 25.4%-ով:

2013թ. մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	մայիս 2012թ.	մայիս 2013թ.	ապրիլ 2013թ.
<b>Կենտրոն</b>	412000	428000	428000
<b>Արաբկիր</b>	339100	355500	355500
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	266100	282300	282200
<b>Նոր-Նորք</b>	228400	251000	250000
<b>Ավան</b>	238050	259100	258050
<b>Էրեբունի</b>	236050	248500	248200
<b>Շենգավիթ</b>	235100	254250	254000
<b>Դավթաշեն</b>	260000	274200	273500
<b>Աջափնյակ</b>	227000	247200	246500
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	226000	239000	238550
<b>Նուբարաշեն</b>	140200	151500	151000
<b>Միջինը Երևանում</b>	<b>255300</b>	<b>271900</b>	<b>271400</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. մայիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. ապրիլի համեմատ, աճել են 0.2%-ով:

2013թ. մայիսին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 322 բնակարաններ, որոնց քանակը, 2013թ. ապրիլի համեմատ նվազել է 2.7%-ով, իսկ 2012թ. մայիսի համեմատ աճել՝ 13.0%-ով:

2013թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մայիս 2012թ.	մայիս 2013թ.	ապրիլ 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	112000	114800	114800
	Ապարան	48800	56550	56550
	Թային	61000	64000	64000
Արարատ	Արտաշատ	91200	94800	94800
	Մասիս	107550	115000	115000
	Վեդի	96200	99300	99300
	Արարատ	73300	75100	75100

Արմավիր	Վաղարշապատ	153000	154000	154000
	Արմավիր	118000	121000	121000
	Մեծամոր	86000	87500	87500
Գեղարքունիք	Սևան	98050	99150	99150
	Գավառ	52500	59000	59000
	Մայիսունի	103600	107600	107600
	Վարդենիս	33500	44300	44300
	Ճամբարակ	21100	27500	27500
Լոռի	Վանաձոր	86800	88300	88300
	Ստեփանավան	72000	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	49500	55000	55000
	Տաշիր	40000	47000	47000
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
Կոտայք	Ախթալա	19500	20000	20000
	Աբովյան	152800	155000	154000
	Նոր Հաճն	128000	128500	128500
	Բյուրեղավան	107000	108100	108100
	Եղվարդ	108500	109300	109300
	Հրազդան	59050	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
Շիրակ	Զարենցավան	83700	85500	85500
	Գյումրի	108700	109300	109300
	Արթիկ	64200	66300	66300
Սյունիք	Մարալիկ	35600	40100	40100
	Գորիս	115000	121000	121000
	Կապան	89100	92100	92100
	Սիսիան	79900	91100	91100
	Մեղրի	65100	80050	80050
	Ագարակ	39700	46000	46000
	Քաջարան	94050	94300	94300
Վայոց Ձոր	Դաստակերտ	8000	8000	8000
	Վայք	83800	94600	94600
	Եղեգնաձոր	116800	123050	122500
Տավուշ	Ջերմուկ	100300	112050	112050
	Դիլիջան	103700	113100	112000
	Իջևան	111800	118100	118100
	Բերդ	48900	60000	60000
	Նոյեմբերյան	41500	49300	49100
	Այրում	24500	31500	31500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. ապրիլի համեմատ աճել են 0.06%-ով:

2013թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 332 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 83, մարզերում միասին վերցրած՝ 249: 2013թ. մայիսին, 2013թ. ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 19.2%-ով, ընդ որում Երևանում՝ 4.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 23.1%-ով: 2012թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 14.0%-ով, ընդ որում Երևանում՝ 32.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 5.7%-ով:

2013թ. մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են

հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները/դրամ/		
	մայիս 2012թ.	մայիս 2013թ.	ապրիլ 2013թ.
Կենտրոն	461500	476100	476100
Արաբկիր	366900	383000	383000
Քանաքեռ Չեյրան	278900	295000	295000
Նորք Մարաշ	305500	319200	319200
Ավան	258900	270500	270500
Էրեբունի	227800	239500	239500
Շենգավիթ	244500	255000	255000
Դավթաշեն	262800	276000	276000
Աջափնյակ	237800	250050	250050
Մալաթիա Սեբաստիա	226100	238000	238000
Նուբարաշեն	144500	150500	150500
<b>Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)</b>	<b>274100</b>	<b>286600</b>	<b>286600</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. մայիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. ապրիլի համեմատ մնացել են անփոփոխ:

2013թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առավաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մայիս 2012թ.	մայիս 2013թ.	ապրիլ 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	132700	136200	136200
	Ապարան	52100	60000	60000
	Թալին	68600	69250	69100
Արարատ	Արտաշատ	98000	100000	100000
	Մասիս	111000	115100	115100
	Վեդի	100200	102300	102300
Արմավիր	Արարատ	87200	88000	88000
	Վաղարշապատ	151200	153100	153100
Գեղարքունիք	Արմավիր	103600	107000	107000
	Սևան	92500	94800	94800
	Գավառ	51900	57100	57100
	Մայիսունի	91200	96000	96000
	Վարդենիս	34000	41000	41000
Լոռի	Ճամբարակ	25900	31100	31000
	Վանաձոր	96100	100000	100000
	Ստեփանավան	87000	90000	90000
	Սպիտակ	113050	114000	114000
	Ալավերդի	46500	50200	49500
	Տաշիր	50100	51900	51900
Թումանյան	12000	12000	12000	

	<b>Շամլուղ</b>	13200	14000	14000
	<b>Ախթալա</b>	29400	30000	30000
<b>Կոտայք</b>	<b>Աբովյան</b>	152000	157000	155800
	<b>Նոր Հաճն</b>	129100	129800	129800
	<b>Բյուրեղավան</b>	119900	120500	120500
	<b>Եղվարդ</b>	115100	116100	116100
	<b>Հրազդան</b>	78800	82600	82400
	<b>Ծաղկաձոր</b>	305000	305000	305000
	<b>Չարենցավան</b>	81800	83000	83000
	<b>Գյումրի</b>	116500	118500	118500
<b>Շիրակ</b>	<b>Արթիկ</b>	61000	63100	63100
	<b>Մարալիկ</b>	48000	52000	52000
	<b>Գորիս</b>	126900	130000	130000
<b>Սյունիք</b>	<b>Կապան</b>	98000	100000	99800
	<b>Սիսիան</b>	88700	96500	96100
	<b>Մեղրի</b>	75000	84500	84500
	<b>Ագարակ</b>	45900	46900	46900
	<b>Դաստակերտ</b>	11600	11610	11610
	<b>Վայք</b>	82600	90000	90000
<b>Վայոց Ձոր</b>	<b>Եղեգնաձոր</b>	111800	116600	116600
	<b>Ջերմուկ</b>	120000	131200	131200
	<b>Դիլիջան</b>	105000	113000	112500
<b>Տավուշ</b>	<b>Իջևան</b>	120000	123100	123100
	<b>Բերդ</b>	57700	60000	60000
	<b>Նոյեմբերյան</b>	46000	48200	48000
	<b>Այրում</b>	34200	36200	36000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. ապրիլի համեմատ, աճել են 0.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2013թ. մայիսին հանրապետությունում օտարվել են 1094 միավոր /487.11 հա/ հողեր, որից Երևանում՝ 110 միավոր /8.38 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 532 միավոր /438.51 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.64 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 344 միավոր /26.37 հա/, որից Երևանում՝ 54 միավոր /1.98 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 189 միավոր /18.16 հա/, որից Երևանում՝ 47 միավոր /4.62 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 19 միավոր /3.25 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /1.14 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 2 միավոր /0.26 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 4 միավոր /0.44 հա/,
- ջրային հողեր՝ 4 միավոր /0.12 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. մայիսին հանրապետությունում օտարված հողերից 917 միավորի /433.86 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 96 միավոր /7.77 հա/, նվիրատվության գործարքներ՝ 176 միավորի /53.15 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /0.62 հա/ և փոխանակության գործարքներ՝ 1 միավորի /0.10 հա/:

Հանրապետությունում 2013թ. մայիսին, 2012թ. մայիսի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.4%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական

նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 13.6%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 1.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 35.7%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում՝ 121.08 հա, որից 116.36 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 30.6%-ը կամ 281 գործարքներ /143.02 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 51 միավոր /1.22 հա/, իսկ 68.4%-ը կամ 627 միավորը /290.82 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 42 միավոր /6.54 հա/: 2013թ. մայիսին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 9 գործարք /0.02 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. մայիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող											
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր			
									Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	0	0.00	2	0.16	22	0.21	27	0.85	3	0.48	2	0.98	23	1.42	14	3.67				
Արագածոտն	35	70.42	0	0.00	3	0.24	39	0.99	73	45.93	0	0.00	30	3.25	2	0.21				
Արարատ	6	2.25	0	0.00	4	0.23	7	0.07	44	39.99	2	0.02	22	2.03	4	0.05				
Արմավիր	5	20.42	2	0.27	1	0.01	6	0.07	70	45.19	0	0.00	36	3.36	2	0.12				
Գեղարքունիք	2	25.00	1	0.12	5	0.07	8	0.62	13	19.38	0	0.00	9	0.82	1	0.20				
Լոռի	0	0.00	4	0.43	8	0.55	3	0.07	27	10.69	0	0.00	7	1.13	3	0.06				
Կոտայք	8	11.86	1	0.10	11	0.30	15	0.31	76	40.77	1	0.65	49	3.48	12	3.07				
Շիրակ	0	0.00	0	0.00	10	0.26	5	0.12	33	22.56	0	0.00	10	1.57	1	0.04				
Սյունիք	0	0.00	0	0.00	4	0.03	2	0.09	10	10.94	0	0.00	5	0.30	1	0.05				
Վայոց Ձոր	1	0.78	2	0.19	1	0.09	1	0.004	5	19.15	0	0.00	10	0.81	0	0.00				
Տավուշ	2	1.00	2	0.32	6	0.43	13	3.63	7	3.67	0	0.00	9	0.86	8	3.54				
Ընդամենը	59	131.73	14	1.59	75	2.42	126	6.82	361	258.75	5	1.65	210	19.03	48	11.01				

Ստորև ներկայացվում է 2013թ. մայիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների և ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյուն ար օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	45	0.86	2	0.16	22	0.21	21	0.49	6	0.36	0	0.00	0	0.00	0	0.00	6	0.36
Արագածոտն	28	0.79	0	0.00	0	0.00	28	0.79	28	68.30	14	67.86	0	0.00	3	0.24	11	0.20
Արարատ	5	0.14	0	0.00	2	0.09	3	0.05	10	1.83	4	1.68	0	0.00	2	0.13	4	0.02
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	14	20.79	5	20.42	2	0.29	1	0.01	6	0.07
Գեղարքունիք	3	0.05	0	0.00	3	0.05	0	0.00	13	25.77	2	25.00	1	0.12	2	0.03	8	0.62
Լոռի	3	0.014	1	0.004	2	0.01	0	0.00	12	1.04	0	0.00	3	0.43	6	0.54	3	0.07
Կոտայք	2	0.102	1	0.10	1	0.002	0	0.00	33	12.47	8	11.86	0	0.00	10	0.30	15	0.31
Շիրակ	5	0.05	0	0.00	4	0.04	1	0.01	10	0.32	0	0.00	0	0.00	6	0.22	4	0.10
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	0.13	0	0.00	0	0.00	4	0.03	2	0.10
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	5	1.064	1	0.78	2	0.19	1	0.09	1	0.004
Տավուշ	1	0.03	0	0.00	1	0.03	0	0.00	22	5.35	2	1.00	2	0.32	5	0.40	13	3.63
Ընդամենը	92	2.04	4	0.26	35	0.43	53	1.34	159	137.42	36	128.60	10	1.35	40	1.99	73	5.48

2013թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 23 գործարք /3.14 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. մայիսին, 2012թ. մայիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 3.0%-ով: Ընդ որում, Երևանում՝ նվազել է 45.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ մնացել է անփոփոխ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 9.1%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 55.6%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 2.0 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 66.7%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. մայիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	11	65.87	76.6	682.3	347.0	36	8.55	365.0	12000.0	3610.0
Ապարան						4	4.45	86.5	2727.3	734.5
Թալին	3	1.99	63.2	640.0	299.4	11	8.42	93.6	5494.5	667.4
Ծաղկահովիտ						8	14.67	79.5	1000.0	275.1
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	2	0.66	4584.8	4767.8	4676.3	16	6.32	335.1	10833.3	2840.3
Մասիս	1	0.52	2104.0	2104.0	2104.0	8	2.90	200.0	11904.8	3124.1
Վեդի	1	0.50	80.0	80.0	80.0	20	30.77	207.0	10795.1	1844.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	1	16.93	70.9	70.9	70.9	35	24.57	294.3	9090.0	1352.0
Բաղրամյան	3	3.41	70.9	70.9	70.9	11	10.17	90.6	2561.1	772.5
Վաղարշապատ	1	0.08	1244.3	1244.3	1244.3	24	10.44	444.4	11764.7	2310.0

Գեղարքունիքի մարզ										
Գավառ								199.8	1875.0	420.0
Ճամբարակ						1	0.05	60.5	953.3	355.2
Մայիսունի								51.1	2850.0	738.5
Սևան	2	25.00	810.0	810.0	810.0			52.2	2134.8	318.5
Վարդենիս						12	19.33	41.2	2575.1	419.0
Լոռու մարզ										
Ալավերդի						2	1.05	170.4	6424.2	602.3
Գուգարք						13	2.23	234.6	6065.9	764.0
Սպիտակ								250.0	5555.5	730.8
Ստեփանավան						3	3.09	90.6	1686.6	320.0
Տաշիր						9	4.32	45.3	1384.4	157.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	0.20	265.0	265.0	265.0	45	17.24	279.3	11942.7	4400.0
Եղվարդ	3	5.36	111.4	307.7	242.0	25	10.78	174.4	11971.8	2610.0
Հրազդան	4	6.30	147.5	1335.4	1035.8	3	1.48	130.5	10256.4	1640.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						15	7.35	252.0	1693.1	623.0
Ամասիա						3	4.84	40.9	261.0	128.5
Անի						3	3.81	110.6	546.9	385.3
Աշոցք						5	2.88	58.5	215.8	127.2
Արթիկ						7	3.70	79.4	1428.6	415.2
Սյունիքի մարզ										
Գորիս						5	5.65	92.6	1023.2	725.2
Կապան						2	1.79	120.0	841.6	354.6
Մեղրի						1	0.41	193.0	3000.0	732.7
Սիսիան						2	3.10	46.3	1977.4	542.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	18.13	125.0	10000.0	1915.0
Վայք	1	0.78	178.0	178.0	178.0	1	1.02	58.8	1430.7	630.0
Տավուշի մարզ										
Բերդ						2	0.19	213.3	3783.8	685.5
Իջևան								267.5	9454.5	1245.2
Նոյեմբերյան	2	1.00	158.4	158.4	158.4	5	3.48	46.7	7368.4	875.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. մայիսին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մասվել ազույն	Միջին			Նվազագույն	Մասվել ազույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						23	23390.0	130.7	22200.0	2578.0
Ապարան	1	508.0	176.9	176.9	176.9	3	3540.0	124.1	609.6	390.0
Թային	2	1937.0	213.2	213.2	213.2	2	2600.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ						2	2966.8	60.0	214.3	89.5
Արարատի մարզ										
Արտաշատ						7	8037.3	173.9	7140.3	896.0
Մասիս	2	1336.8	891.1	3693.8	2292.4	10	8206.5	187.5	25000.0	1210.0



Վեղի						5	4068.0	126.1	5000.0	661.4
Արմավիրի մարզ										
Արմավիր						10	8207.7	131.6	9090.9	1314.0
Բաղրամյան								100.0	833.3	240.0
Վաղարշապատ	1	100.0	2009.7	2009.7	2009.7	25	25017.7	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	2210.0	186.6	1084.3	683.2
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մայիսունի	1	143.8	377.3	377.3	377.3	6	4983.0	119.3	5000.0	282.5
Սևան	1	112.0	1161.6	1161.6	1161.6	1	1030.0	240.0	3110.4	315.0
Վարդենիս								72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	2	156.0	1100.0	1100.0	1100.0	1	56.0	114.3	1388.9	216.6
Գուգարք						4	7688.0	77.9	14083.3	1262.2
Սպիտակ	4	5236.0	230.5	231.4	230.9	1	2600.0	104.9	1348.3	206.0
Ստեփանավան						1	1000.0	88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուսյան	9	2770.5	1507.5	5421.9	3521.1	30	21391.9	264.5	35353.5	1987.0
Եղվարդ						15	9379.0	173.6	27000.0	2856.4
Հրազդան	1	180.0	1411.1	1411.1	1411.1	3	3210.0	117.7	34848.5	1320.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	3	1020.0	1400.0	1805.6	1577.8	7	9314.0	113.6	18750.0	333.7
Ամասիա	1	416.0	165.4	165.4	165.4			45.3	274.7	71.0
Անի	2	800.0	346.8	404.6	375.7	2	5168.0	67.9	180.6	175.1
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ						1	1170.0	111.8	5000.0	217.0
Սյունիքի մարզ										
Գորիս						1	760.0	112.2	1700.0	367.9
Կապան	4	251.3	1147.9	2900.0	1945.2	3	1365.0	67.9	2638.9	302.0
Մեղրի						1	900.0	68.5	632.9	210.0
Սիսիան								123.5	875.0	209.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						8	6814.4	96.7	7659.6	504.4
Վայք	1	852.4	862.3	862.3	862.3	2	1298.0	120.7	1448.3	220.0
Տավուշի մարզ										
Բերդ	1	2243.0	45.0	45.0	45.0	2	1149.0	75.8	810.0	117.0
Իջևան						6	6138.9	74.1	14423.1	512.0
Նոյեմբերյան	4	1787.3	1366.2	1987.3	1723.3			125.0	1948.1	228.0

2013թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 556 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 62.9%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2013թ. մայիսին, 2013թ. ապրիլի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 24.3%-ով, իսկ 2012թ. մայիսի համեմատ՝ 21.8%-ով:

2013թ. մայիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 32 բնակարանների, 59 անհատական բնակելի տների, 258 հասարակական, 70 արտադրական նշանակության օբյեկտների, 113 հողերի, 21 ավտոտնակների և 3 այգետնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. մայիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 4 վարձակալության գործարքների, այդ թվում 1 միավոր /0.03 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2013թ. ապրիլի համեմատ նվազել է 50.0%-ով, իսկ 2012թ. մայիսի համեմատ՝ 81.0%-ով: 2013թ. մայիսին հանրապետությունում վարձակալված 720.77 հա հողերից 0.65 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 720.13 հա հողերից 694.25 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության,

8.06 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 529.20 հա, որից 527.59 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1616 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.4%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. ապրիլի համեմատ նվազել է 23.8%-ով, իսկ 2012թ. մայիսի համեմատ՝ 15.7%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.3%/, առանձնատների /25.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /9.3%/ և հողերի /10.1%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 729 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. ապրիլի համեմատ նվազել է 34.9%-ով, իսկ 2012թ. մայիսի համեմատ՝ 29.1%-ով:

2013թ. մայիսին հանրապետությունում գրավադրվել են 263.14 հա հողեր, որից 7.18 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 96.3%-ը կամ 253.33 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.40 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 143.85 հա, որից 143.34 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. մայիսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 137 գործարքներ, որից 81-ը՝ Երևանում: 2013թ. ապրիլի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 14.9%-ով, ընդ որում Երևանում՝ 32.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 36.6%-ով: 2012թ. մայիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 2.1%-ով, ընդ որում Երևանում՝ 19.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 40.0%-ով:

2013թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1430 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2013թ. ապրիլի համեմատ նվազել է 36.9%-ով, իսկ 2012թ. մայիսի համեմատ՝ 22.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /23.9%/:

## **«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**